

(Autriche) ... stangasse W. 4 Vienne

ԲԱԺԱՆՈՒՄ ԿՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար
Տարեկան 12 Ձր.
Վեցսուսայ 6 »

Առաստանակի համար
Տարեկան 15 »
Վեցսուսայ 8 »

Ամերիկայի համար
Տարեկան 3 srj.
Վեցսուսայ 1.50 »

ԿԱՆԻՍԻՎ ՎՃՐԵԼԻ

Իսանդուան սոյր առաջին երեսին համար 40 սանթիմ. հ. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ. հ. երեսին սե. ի սանթիմ. հ. համար 20 ժ. գեղջ կրչայ:

ՇԱՐՔԻՆ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂԱԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԵՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԶՈՐԵՔԵՆԱԲԻ ԵՒ ՇԱՄԱՍՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Никола Бакърджиевъ

Իսանկ եւ դրամ դրկի
Խորագրութեան հասցիին

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна
Redaction du journal
«Charjourn»
Varna (Bulgarie)

Իրոքիւնիս եւ յեւ տրեքի

Առաստանակի համար ձեռքի
(20 ՍԱՆԹԻՄ)

Պուշկարիոյ համար ձեռքի
(15 ՍԱՆԹԻՄ)
Վանուայի համար ձեռքի 10 սանթիմ

ՍԻ ԹԻՒՐԻՍԱՑՈՒԹԻՒՆ

Պ. Չերազ իր թերթի վերջին համարի «Միութեան կոչ» առաջնորդողում երկու ուշագրաւ մտքեր է յայտնել. առաջինը՝ իբր թէ մեր յեղափոխականները ենթադրել են որ արդէն խաղաղ քարոզի ժամանակը անցել է և դրա համար էլ իսկոյն գիտել են յեղափոխական կտրուկ միջոցներին, երկրորդը՝ որ Դաշնակցութիւնը այսօր համոզվելով գրչի առաւելութեան մէջ՝ սրի դիմաց, «ինչպէս ինքը պարոն Չերազ», նախաձեռնարկ է եղել Պարիզում մի ֆրանսերէն թերթի հրատարակել:

Նախ շնչեմք որ Պ. Չերազ երբէք յեղափոխութեան քարոզիչ չէ եղել, այլ իր յոյսը միմիայն Եւրոպական գիւղամատիայի վրա դրած մի Հայրենասէր միջնորդ՝ մեր և Եւրոպայի միջև: Մենք յարգում ենք այդ գործունէութիւնը և Չերազի ծառայութիւնը գնահատելը թողում ենք ապագայ հայ պատմադրին...

Իսկպէս Պ. Չերազ շատ լաւ է արել որ սրի տեղ գրիչ է վերցրել, և ինքորդ գրիչ. որովհետեւ նա ոչ կարող էր չոր գործածել, և ոչ էլ գրչով մարդկանց դէպի սուրը գրաւել:

Դիմենք Պ. Չերազի յայտնած երկու ուշագրաւ մտքերին.

Ա.—Պ. Չերազ սխալվում է կարծելով թէ՛ յեղափոխականները խաղաղ քարոզի ժամանակը անցած են կարծել: Այ, այդպէս չէ. այլ յեղափոխականները համոզված լինելով որ, առանց յեղափոխական կտրուկ միջոցների, քարոզները ոչ մի նշանակութիւն չունեն 500 տարվայ ստրուկ ժողովրդի և բռնակալի համար՝ երկու գործն էլ զուգընթացաբար են տարել:

Բ.—Մեզ համար աւելի հետաքրքիր է Չերազի երկրորդ մտքը. այն թէ՛ հայոց «ամենազօրեղ յեղափոխական կուսակցութիւն»

թիւն—Դաշնակցութիւնը—նոյն պէս համոզվել է գրչի առաւելութեան մէջ՝ սրի դիմաց. եթէ այդ ճիշդ է, ուրեմն Դաշնակցութիւնը ոչ միայն ամենազօրեղ, այլև բոլորովին յեղափոխական կուսակցութիւն չէ, ուրովհետեւ ապստամբական յեղափոխութեան մէջ առաջին դերը կատարում են միայն «Սուրբ և գեղակեր»:

Եւ ամեն մի ապստամբական յեղափոխական կուսակցութիւն երբ սկսում է գրիչը որից գերադասել՝ փաստ է տալիս թէ իր մէջ այլևս ապստամբական ոգի չէ մնացել ու ոչնչանալու վրա է: Այդ ճշմարտութիւնը փաստելու համար բաւական է ուսումնասիրել մեր և ուրիշ յեղափոխական կուսակցութիւնների անցեալը ու ներկան:

Մենք ուզում ենք հաւատալ որ Դաշնակցութիւնը երբէք գրիչը սրից գէրադասելու վտանգաւոր կէտին չի հասնիլ. ուստի այդպիսի մի եզրակացութիւն Պ. Չերազի կողմից թիւրիմացութիւն պէտք է լինի:

Մենք հաւատացած ենք թէ՛ Դաշնակցութիւնը նախաձեռնարկ է լինում Պարիզում ֆրանսերէն թերթի հրատարակել ոչ թէ այն պատճառով որ գրիչը սրից գերադասում է, այլ նրա համար, որ տեսնում է թէ հայկական հարցի համար Եւրոպական հասարակութիւնների առջև միջնորդի դեր կատարողները չեն կարողանում իրենց գերը լիովին կատարել...

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՈՒՇ, 25 Նոյեմբեր

Ազնիւ հօրեգրայր,
1895 թուականէն սկսեալ ամէն օր և ամէն վայրկեան մասնաւոր մարդասպանութիւններ, կողոպտումներ, առեւանգումներ և կրօնափոխութիւններ յաճախ կը պատահին Մշոյ գաւառին մէջ. այդ պատճառաւ չ'ըթէր վրան իսկ կանգ առնել և մէկիկ մէկիկ

մատնանիշ ընել: Արդէն ընդհանուր մը հանգէպ մասնաւոր իր նշանակութիւնը կը կորսնցնէ, իսկ նա որ գրելու սոյն պատահառիթն ձեռք բերած եմ խիստ ահաւ գողով, մէկ երկու նամակներովս որքան որ կարելի է մեր հայրենիքի, երբեմն քիչ շատէ հանգիստ և բարեկեցիկ. իսկ այժմեան աւերակ և արիւնլոյս վիճակը նկարագրել ձեզ արդեօք ո՞վ գիտէ, անգամ մըն ալ այսպիսի յարմար միջոց մը մեզ պիտի ներկայանայ գրելու:

Հօրեգրայր, մեր գաւառի հայ գիւղերն հարկահաւաք ուստիկաններով լեցուն են: Այդ ունզամները չըլտուած ու ամէն տեսակ անզգամութիւններ ի գործ կը դնեն. ինչ որ տուններու մէջ կը գտնուի կառնեն կը տանին և մինչև իսկ մէկ սուր պարէնը անգամ չեն ձգեր: Իսկ այն ընտանիքներն որոնց պապենական խրճիթէն ի զատ բան մը չէ մնացած, անխղճաբար տունէն դուրս ընելով, տունը քանդել կուտան, վրայի գտնուած քանի մը փրտուած գիրաններն կառնեն և աննշան գնով մը կը ծախեն, բաց օդի մէջ ձգելով ատունց կիներ ու զաւակները: Մինչև այս օրս որ հայ գիւղացին միմիայն կը մխիթարուէր իր այդ փրփուած խրճիթով, այժմ կը զրկուի իր այդ մնացած աւանդէն, որ սերունդէ սերունդ կտակուած կը մնար չէն պահելու համար: Այսօր հարկաւար ընտանիք իրենց տուններէն իսկ զրկուած, յուսահատ, մերկ, անօթի այս և այն կողմ իրենց օրերը կանցունեն ու իրենց օրհասը կողբան: Այդ ամենաթշուառ աստիճանին իսկ իրենց ամէն բանէ աւելի քաղցր հայրենիքէն և քանդուած օճախէն չեն բաժնուիր ու կը մնան վերջին մխիթարականի յոյսով. այն է թէ կալուածներէ զրկուեցան, գոնէ պապենական գերեզմաններէն չը զրկուին, ուր որդոց որդի թաղուած կը մնան իր պապերը և կապսեն մինչև որ դժբաղդ օր մըն ալ իրենք արդէն յուսահատ երթան անոնց երանմին խառնուելու: Ահա մեր հայ

անուս և պարզ գիւղացիին դրական կամքն, որ ամէն տեսակ անխիղճ գազանութեանց գիմադրելով մինչև իր վերջին շունչն իսկ շուղեր հեռանալ, նախամեծար կը համարէ իր փրատակ խրճիթի ներքեւ ճղմուիլ, քան թէ գաղթել օտար երկիրներ՝ ապագային առաջ երթալու դիտումով:

Հօրեգրայր, արդէն գիտէք որ մեր գաւառը չըջապատուած է այն կիսավայրերի աշիթէթներով, որ այսօր Համիտիէ կը կոչուին. կառավարութեան պակասն իրենք լրացնելու համար օրն ի րուն ձի հեծած 40—50 հոգիով ամէն մէկ հայ գիւղերը կը լեցունին և ամէն տեսակ գազանութիւններ ի գործ կը դնեն. եթէ հայերէս մին մէկէ մը ցաւի և անոնցմէ խնդրէ որ իրենց գազանութիւններուն չափ մը դնեն, փոխանակ լսելու, խեղճ ծեծի տակ կը մեռնեն և իր ընտանեկան հարկին ալ ամէն տեսակ անպատուութիւն կը բերեն:

Տես թէ որ աստիճանի հասած ենք. մեր Մշոյ գաւառը չորս մասի բաժնած են իրենց մէջ. Ա. հիւսիսային կողմ. Զիարէթ և Բալու գիւղերէն բռնելով մինչև Աւրան, Գարաու, Մխաու, Աղճան, Ալիճան և Սուլու գիւղերը որ Հասնանցի, Ճըպրանցի և Չարպըհօր բնակող Չէրքէզներու բաժին է ինկած. իրենք են այդ տեղերու տէրն ու թագաւորը և իրենցմէ է կախուած այդ տեղի հայ ժողովրդին կեանքն: Առանց վախի, կընեն ինչ որ իրենց խիղճն կը թողատրէ ընելու:

Բ. Արեւմտեան կողմն, որք են՝ Քիւրտմտան, Խղլաղաճ, Գոմեր, Քարճուր, Փողրկով, Արտխոնք և Շիխլան իրենց չըջականերով մէկտեղ. Պատքանցի և Ալմանցի աշիթէթներու ոտից կոխան եղած են, ատոնք ալ տարբեր եղանակաւ մը կը հարստահարեն և չնչին բանի համար մարդասպանութիւններ կընեն: Շատ անգամներ ալ ատ տեղի հայերուն տունները կրակի կուտան ու մու

խիբ կը դարձունեն: Ահ ու սարսափ իրենց չորս կողմ սփռած են և կը սպառնան այդտեղի հայոց, որ իրենց տուները ձգելով հեռանան և կըսեն թէ մեր Սուլթանի հրամանն է մէկ հայ իսկ չի ձգել, այլ սուրէ տնջունել: Իսկ մենք մընչեւ այսօր ձեզ խնայեցինք, ասկէ յետոյ ալ անկարելի է խնայել: Գլուխնուգ ճարը անսէք:

Հայերը շնչելու կարգադրութիւններն Մուշէն կը տրբուին: Կարելի է որ Մշոյ տաճկութիւնը լոկ հանդիսատեսի մը գերն ստանձնէ: Յեղափոխութիւնը պեռ երեւան չելած ատոնք ամէն տեսակ անխիղճ միջոցներու կը դիմէին հայ գիւղացոց կալուածոց տիրանալու համար, իսկ այսօր արգէն աղատ համարձակ կընեն: Այդ պատճառաւ Մուշն իր շրջակայ գիւղերով ինչքով, սոսցուածքով և պատուով ատոնց ձեռքն է ուր ամէն տեսակ անխղճութիւններ կը գործեն: առանց պղտիկ դիմադրութեան մը իսկ հանդիպելու:

Գ. և Դ. հարաւային և արեւելեան կողմերն ալ, Խասգիւղէ բըռնելով մինչեւ Վարդենիս, Վարդենիսէն ալ մինչեւ Յրոնք, Պալլըքի, Մոտքանցի, Խութեցի և Սայիտանցի չորս աշիրէթի հարստահարութեանց առարկայ է դարձած: Ինչ որ գտնեն կը քաշեն կը տանին: Ամէն լաւ բան, Ալլահ Մուհամմէտի համար շնորհած է, ինչ իրաւունք ունի կեանքով մը ատոնց տէր դառնալու: այս է իրենց առաջին խօսքն, երբ հայու մը հետ խօսելու բըռնուին: Այլեւս բան մը չէ մնացած ընտանեկան պատուէն ի վատ: ամէն ինչք և ստացուածք ձեռքերնուս առին, հիմա

ալ աչքերնին ընտանեկան պատուներնուս են տնկած, անկարելի է այլեւս տանիլ: մահը նախամեծար կը համարենք, քան թէ մեր պատուին մեր աչքին առջեւ բռնաբարուիլն տեսնել:

Հօրեղբայր, օրինակ մը ցոյց տամ որ լաւ համոզուիս թէ ինչ օրերու ենք հասած: այն գիւղն որ տասը տարի առաջ 3—400 տունէ կը բաղկանար, ամէն մէկ տուն մէկէ սկսեալ մինչեւ չորս լուծք կը լծէր, ուրախ զուարթ առաւօտուն ծերով, Կրիտասարգով, կնով, շրժով դէպի իր արտն կարսորէր աշխատելու, այսօր այդ գիւղերէն համարէ թէ կէս չէ մնացած, այն ալ հաղիւթէ ամէն մէկ գիւղը հինգէն սկսեալ մինչեւ ինը կամ տասը լուծք կը գտնուի: Մի՞թէ կարելի է 5—10 լուծքի եկած արդիւնքով 200 տնուոր գիւղ մը պահուի ամբողջ մէկ տարի: Ըստ իս, եթէ նոյնիսկ վարուած արտերու մէջի հողն ալ ցորեն ըլլայ, չը պիտի կրնայ գոհացնել: Ահա սոյն օրինակէն կրնաս դատել և հասկնալ թէ՛ այլեւս կարելի է ապրուիլ:

Ահա մեր Մշոյ գաւառի ներկայ ցաւալի վիճակն, որ վերի վերոյ կը գրեմ ահ ու սարսափով: արգէն ամէն վայրկեան մահ է մեզ համար: Ես այս տեսակ անտանելի կեանքէն այլեւս ձանձրացած եմ: Ինձ համար ինչ որ կրլալ թող ըլլայ, պիտի շարունակեմ քանի մը նամակներով պարզել ձեզ մեր կացութիւնը և ձեր դէպի մեզ անտարբեր ու ապերախս գտնուիլն ցոյց տալ:

Տ.

—)(—

ՏՊԱՌՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.

ՄԻՇՏ ՅՈՒՍԱՍԱՐՈՒԹԻՒՆ

Վերջապէս նաւը հասաւ Բուսնուգ: Միքստ օրքա՛ն արտփած էր հոն հասնելէ առաջ:

Պատմական քաղաք, յեղափոխական ամբարձր, ուր կը մտնէին ու կելլէին այնքան թարմ գաղափարներ եւ ո՛րքան վնասակար մարդիկ: Պատուհաս քաղաք, բոլոր պուրկար աղաներուն ու խղաղ ժողովրդին, քու պատճառաւ քանի՛ վաճառականներ սնանկացած են եւ քանի՛ քանի՛ խեղճ մարդիկ կախուռած: Տարիներով թոյն էր որ կը տարածէր ամէն կողմ, եւ որ չի գիտեմ ինչ հրաշքով յետոյ պալատան դարձաւ: Եւ այսօր «Ես բուն Բուսնուգցի եմ» խօսքը հպարտութեամբ կարտասանէ հաճի Որիսողներու սերունդը:

Հաճի Որիսող քսի ու միտքս ինկաւ Պուլկարներու «Լուսադիմին» գիրքը: Ինչքա՛ն նմանութիւն ունի ան մեր «Խաւարագիրքին» կեանքի հետ:

Պուլկարական լուսադիմին

Հայկական խաւարագիրքին:

Կերեւակայի մաքուր, կոկիկ եւ յեղափոխական արձաններով զարդարուած խորհրդաւոր քաղաք մը: Սակայն զիս առաջնորդեցին հիւրանոց այնպիսի օձապտոյտ փողոցներով որ, ենթադրած ելեքտրական լապտերներս եթէ գտնուէին իսկ, մեծ ծառայութիւն մը չի պիտի ընէին կառուցան Անձեաններու: Բոլոր պատմական քաղաքներու եւ բոլոր մեծ մարդերու համար շարունակ միեւնոյն յուսաբարութիւնը կրեր եմ եւ դարձեալ նոյն անփորձը, նոյն երազոտը, նոյն «սանդիմանդալը» մնացած եմ:

Կը կարգաս սքանչելի գիրք մը, հեղինակը կը սիրես եւ կերեւակայես համակրելի դէմք մը, աշխոյժ խօսուածք մը, մաքուր եւ գաղափարական գործիչ մը: Կը փափաքես անպատճառ տեսնել—սեղ այդ պաշտելի մարդը:

Կը փակուի: Չամօհանի, Ինձիճեանի, Ալիշանի կամ Գաթրճեանի հոյակապ հրատարակութեանց՝ վոքրիկ պատմական կամ գիտական գրքոյկներ միայն յաջողեցին: Ոչ ոք Ալիշանի, Պէշիկթաշեանի, Դուրեանի կամ Գաթրճեանի թրթռուն քնարը կայողացաւ հնչեցնել: Լէօ, Աղայեան, Շիրվանզատէ, Մուրադյան, Ահարոնեան եւ այլն, մանրանկարները եղան Արտիկաններու կամ Բաֆֆիններու:

Անուրանալի ճշմարտութիւն մըն է թէ՛ վերջապող դարուն առջին եւ քեզ քառորդներուն մէջ մեր ազգը արատաբար է ժամանակակից ամենէն տաղանդաւոր ու փայլուն հանճարները, որոնք ազգային յատկութիւնները, որոնք համար ամէն ճիգ թափած են: Անոնք ապրելով շրջանի մը մէջ, ուր ամէն ինչ նոր բողոքներ կարձակէր հայուն համար, ուր եւ ունեցէր, ոգեւորութիւնը, յոյսը եւ մանաւանդ աղաւառ ու անկաշկանդ գործունէութիւնը իրենց սուրբ անհալոյն ասպարէզ մը կը քանային, յաջողեցան ամենայն դիւրութեամբ զարգանալ ու զարգացնել, եւ այդպէսով յեղաշրջում մը առաջ բերել

Բայց ո՛վ յուսախարութիւն, աչքերուդ չես հաւատար եւ ոչ ալ ականջներուդ: Գծու՛մ զէմքով մարդ մը, մարած ձայնով ճարտասան մը եւ յետադէմ գաղափարներով էնդրիկան մէկը կը ներկայանայ իրականութեան մէջ:

Ալ անոր գրքերէն համ չես առնիր, կատես ու կը քննադատես անոնք: Ո՛րքան երջանիկ պիտի զգայի զիս, եթէ Շիրվանզատէներ, Պուշեաններ եւն. տեսած չըլլայի: . . .

Բ.

ՄՐՃԱՐԱՆ—ԸՆԹԵՐՃԱՐԱՆ

— Ընթերցարան գացի՞ք, հարցուց նոր ծանօթներէս մին:

— Ընթերցարան ունի՞ք, հետաքրքրուեցայ ես:

— Ինչ կըսէք, կոկիկ աղու որ ընթերցարան մը ունինք, Եղանաւոր պատկերներով զարդարուած:

Հասցէն առնելուս պէս. «Ունի մէյտան էրմէնի պիպիթէք» հարցընելով հասայ մի գոան ւոջեւ: Լուսաւուռուէն ներս նայեցայ, տեսայ պիլայտ մը, խառնվէ եփող մը եւ բազմաթիւ ռեզաններ:

Անպատճառ սիրով առաջնորդուեք եմ ըսի, եւ երբ կ'ըստարաստուէի յետ դառնալ վրայ հասաւ բարեղէմ հայ պատանի մը:

— Խնդրեմ, պարոն, ո՞ւր տեղ է հայոց գրադարանը, հարցուցի:

— Մենք գրադարան չունինք հոս, այլ ընթերցարան, որ գրքեր ալ ունի:

— Ա՛խ, ներեցէք, ո՞ւր տեղ է հայոց ընթերցարանը:

— Այս է, պարոն, հրամայէք ներս:


Եւ հրամայեցի ներս: Եկատեցի որ մէկը սուրճ կը խմէ. կարելի է օրէնքը այդպէս է, մտածեցի եւ սուրճ մըն ալ ես ապսպրեցի: Նոյն մարդը լոխում մըն ալ ուզեց. կարելի է սովորութիւնը այդպէս է, ենթադրեցի եւ: Արիսողոմ աղայի պէս, սովորութեանէն դուրս չելնելու համար լոխում մըն ալ ես ուզեցի: Բայց ո՛րքան ամբողջալ իմ յիմարութեանս վրայ:

ազդին մէջ: Անոնք ժամանակին ու միջավայրին հարազատ արդիւնքներն էին:

Ուղղամիտ ու անաչառ պատմաբան մը, երբ ներկայ դարուն մեր յեղաշրջումները ուսումնասիրէ, իսկոյն այն եզրակացութեան պիտի հասնի որ, հայութեան յանկարծական կասուածք եւ զէպի առաջ երթալու կարկամութիւնը հետեւանքն է լոկ այն հալածանքներուն, հարստահարութեանց, ճնշումներուն, յուսաբարութեանց, անտեսական անկումին, որոնք ամէն կողմէ կկան ընկճեցին հայը թէ թուրքիոյ եւ թէ Ռուսիոյ մէջ: Ապահովապէս, Բաֆֆին կամ Գաթրճեանի իրենց յաջողութիւնը պիտի ունենային, եթէ կոշտ ու կաշկանդի գրքերնութիւն մը չի գար անդամատնելու հեղինակներու գրուածքները, եթէ ստան ընդունելութիւն մը, որ ժողովրդին անտեսական անձկութեան արդիւնքն էր գըլխուստարապէս, գրատուններու մէջ, փողոցներու տակ թաղուելու չի դատարարէր հրատարակուած գրքերը: Այս պայմաններու մէջ բնականաբար գրողը պիտի կորսնցնէր իր թափը, եւ յուսահատ լքուած պիտի վնասեցնէր զինքը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԻՐԱԿ ՏՐՏՈՒՆՁԸ



Ժամանակէ մը ի վեր հայերուս մէջ սովորական խիտ դարձած է տրտնջալ մեր բոլոր ունեցածին վրայ: Հոս ու հոն, մերթ ընդ մերթ ելուտան եկող տղեկութիւններ, վատ ու դատապարտելի արարքներ, անհատական խարէութիւններ ու զեղծումներ, իրաւունք սուած են յաճախ ամենէն լուրջ ու խելացի կարծուածներուն յուսահատիլ, արտնջալ, ողբալ ու արտասուել ամբողջ հայութեան վրայ, ինչպէս մարդ կարտասուէ գերեզման իջած սիրելի մը անգարձ յիշատակին վրայ: Օր մը, ամբողջ յեղափոխութիւնը մէկ հարուածով կը դատարարուի, ուրիշ օր մը ամբողջ հայ մամուլը նոյն բաղդին կարծանանայ, այսօր բոլոր ազգային վարժարանները անխտիր կը հարուածուին, վաղը անխիղճ գրիչ մը կուզայ մեր ազգին մէջ ամէն առաքինութիւն իսպառ անհետացած տեսնել: Այնպէս

որ, ընթերցող մը, եթէ իրաւունք հայութեան իսկական վիճակին տեղեակ չըլլայ, այդ հրատարակութիւնները կարգաւոր, բոլորովին պիտի լքանի: ալ իրկութեան ամէն յոյս յաւէտ կորսուած պիտի նկատէ ու պիտի պատրաստուի սքաւոր ձեռքերով գերեզմանական ցուրտ վէմը զետեղել հայութեան դամբանին վրայ: Ահա այս սպաւորութեան տակ պիտի մնայ այն ամէն անհատ, որ Բագրատիկայի յունվարի թուին խրմբազրականը կարգայ, Հայր Նրամեան, իր երեմիակներով, խեղճերու վատերու, մակարոյճներու, ինկածներու, գրչակներու, ճոռմարաններու ամբողջ լեզուն մը ներկայացուցած է ներկայ սերունդին գործիչները: Իսկ արդի հայութիւնը՝ յաւակնոտ, հասմող, գող-ը ու սնափառ, «որուն միակ առաքինութիւնը, յարստակ յիշողը, շլատած է այդ ապականարար ակտերուն ազդեցութեան տակ»: Անցեալ շրջաններու միամիտին յիշատակին ներբողովը օրորուող յօգուածագիրքը ցաւ կը յայտնէ որ, հայութեան համար այնքան յուսալից ու փայլուն տըշաւոյսով մը բացուող ներկայ դարը, ընդհակառակը, խիստ ամուլ ու խառնակ վերջալոյսով մը

երբ խուժը խուժը յաճախորդներ թղթախաղի սկսելով, սկսան իրարու սուրճ ու լոխում ապսպրել:

Սեղանի վրայ 1—2 թերթեր ձրգուսած էին:

— Ուրիշ թերթ չի ստանա՞ր ձեր ընթերցարանը, հարցուցի խանվեճի-գրագրանապետին:

— Ներսն են, պարոն, ընթերցարանը ներսն է:

Գնացի ներսին ներսը, իսկապէս հայկական ընթերցարան, ցուրտ ու աղքատիկ բազմաթիւ թերթեր, ազգային նշանաւոր պատկերներ եւ մեկ ընթերցող:

Վարդաններու, Լազարեաններու, Հայրիկներու եւ Իզմիրեաններու կարգին աչքիս զարկաւ քահանայի մը պատկերը: — Աս ալ երեւի Վարդանանց Աւետիք երէցի պատկերն է: Բարեւ մտեցայ զիտելու թէ Ն դարու ո՞ր ստորի լուսանկարչին ըստ-գործնակած են:

Պատկերին տակ գրուած էր, Բուս-ճուքի «Տէր այս ինչ քահանայ այս ինչեան»:

Բնածին սրամտութեամբս հասկցայ թէ անպատճառ ընթերցարանի հիմնադիր հանգուցեալ քահանայ մըն է եղեր: Երբ դուրս կենէի ընթերցարանի սրճարան գաւթիկէն, խաղացողներու ահագին բազմութիւնը տեսնելով չի կրցայ չի հարցնել:

— Ինչո՞ւ չեն կարդար այս պարոնները:

— Յարգելի պարոն, վատ գաղափար մի կազմէք մեր վրայ: ասոնք ցորեկը հասոյթի համար կը խաղան, իսկ երեկոներն ալ կը կարդան զարգանալու համար:

— Սրճարան լուսադիմին

Ընթերցարան խաւարադիմին, եզրակացուցի ես եւ ուրախ տպաւորութեան տակ հեռացայ:

Գ.

ՄԵՆԵ ԵՐԱԽՏԱԿԵՏՆԵՐ

— Ընթերցարան գացի՞ք, նորէն հարցուց իմ ծանօթս:

— Այո՛, գնացի:

— Ի՞նչ տպաւորութիւն թողուց ձեր վրայ:

— Սքանչելի: — Պուկարիոյ հայերուն մէջ Բուս-չուկցուց նման լաւ ընթերցարան ունեցող չի կայ:

— Շատ ուրախ եմ, կերելի հանգուցեալ հիմնադիր քահանան սպաս-ները ծախեր եւ անով գրագրանը հիմնել է:

— Այդ ըստաներէդ հիշ մէկը գոյութիւն չունի:

— Ուրիշն ո՞վ է ընթերցարանի մէջ կախուած քահանայ:

— Կը սխալիք, պարոն, նա ո՛չ հանգուցեալ է եւ ո՛չ ալ հիմնադիր: այլ շատ բարի տէրաէր մը, որ պատերազմի ատեն մեծ ծառայութիւն մատուցել է ժողովրդին չի հեռանալով անկէ, ինչպէս միւս քահանաները ըրած են:

— Բայց միթէ՞ այդ իրաւունք կուտայ Վարդաններու կարգը դասելու զայն:

— Ուրիշներ ալ այդ դիտողութիւնը բերին, բայց անգամ մը եղածը եղած է, եթէ հիմա խնդիր լինի, պիտի կարծուի թէ թշնամական ցոյց մըն է այդ յարգելի քահանայի դէմ:

— Բայց դա անհամեստութիւն է եւ քաջութիւն պէտք է ունենալ դարձանելու:

— Չէ՛, խնդրեմ այդքան խոշոր անկան մի գործածէք: այդ պատկերը ընթերցարանէն դուրս չելլեր: վերջապէս ժողովրդին սիրած մարդն է, ուրիշ միջոց գիտէ՞ք Վարդաններու եւ մեր քահանայի մէջ եղած տարբերութիւնը չեզոքացնելու համար:

— Հանեցէք մեծ հայերու պատկերները եւ քահանային ու բոլոր քաժանորդներուն պատկերները շարեցէք: բացի պատերը զարդարելէն, բաժանորդ գրուելու նոր զրգիտ մըն ալ կը լլայ այդ:

— Ի՞նչ լաւ մտածում, ուրտխացած գոչեց ծանօթս, աղէկ կը սեն որ խելք խելքի վրայ բարձր է: վարչութեան յառաջիկայ նիստին ներկայացնեմ այդ առաջարկը եւ ազատինք այդ անհատնում քննադատութիւններէն:

ՄՈՂՈՐԱԿ

(Մենացեալը յարտդող)

—)(—

ԲԱՂԱՔԱԻԹՈՒԹԵԱՆ, Կ Ա Ր ՊԵՏՆԵՐԸ (. .)

Եւրոպական թերթերը կը նկարագրեն սարսափելի մանրամասնութիւններ Ձինաստանի աւերման մասին եւրոպացի զօրքերուն ձեռքով:

Ծովէն մինչեւ Բէքին և Ամուր գետէն նոյնպէս մինչեւ Բէքին կատարեալ աւերակ դարձած է: Ժողովուրդը լիովին կողպտուած է: Բէքինի 5—6000 տարուան մէջ գոյացած անթիւ հնութիւններէն և հարստութենէն բան մը մնացած չէ, իսկ հրաշալի տաճարները, պալատները և յուշարձանները բոլորն ալ մոխիրի վերածուած են: Քանի մը թերթեր կը հաղորդեն որ միմիայն անգլիական զօրքերը 150 միլիոն Ֆրանքէն աւելի արժէքով աւար պռած են: Իւրիկի և Պերլինի թերթերը մօտ օրերս հաղորդեցին թէ՛ Ձինաստանէն քանի մը հազար սնտուկներ հասած են, որոնք ամէնքն ալ լեցուն են Բէքինէն և այլ քաղաքներէն յափշտակուած հին և թանկագին իրերով:

Պրանսական կառավարութիւնը ամենալավ իր զօրքերու այդ բարբարոսութենէն՝ հրամայած է այդ սնտուկները գրաւել, որպէս զի յարմար ժամանակին նորէն Ձինացիներուն վերադարձնէ:

Ամերիկեան բարձրաստիճան սպայ մը քաղաքակրթութիւնը անպատուող այդ փաստերուն համար հետեւեալ նամակը գրած է «Թայմզ»ին:

«Հոս ես կապրիմ վրանի մը մէջ, Երկնային տաճարէն հարիւր մէթրօ հեռու: Բէքինէն մինչեւ ծովափը 1500 մղոն տարածութեան վրայ, միջազգային զօր-

քերը ամէն ինչ խորտակած են: Բոլոր տուները թալնուած և աւերուած են Մանջուրիներու պալատները, տաճարները և խըրճիթները զերծ մնացած չեն այդ բարբարոսութենէն:

«Ես առիթ ունեցայ շատ գիւղերէ անցնիլ, բոլորն ալ կը ներկայացնեն նիւնէի ու Բաբելոնի աւերակները: Բացի Ձինացի համալներէն որոնք ստիպուած են եւրոպացիներուն ծառայելու, ոչ մէկ չինացի կը տեսնուի թէ Խիէնձինի և թէ Բէքինի մէջ: Գիւղերու մէջ կենդանի արարած մը չես տեսնար:

«Միջազգային զօրքերը բռնութեան և կողպտուտի մէջ շատ հմուտ եղած են: Թիէնձինի փոշերանոցը թալանուած է: Շատ մը զինուորներ տեսայ որոնք չէին կրնար իրենց յափշտակած գրամները և ուրիշ իրերը տանիլ, ժանրութեան և շատութեան պատճառով: Տեսայ թէ ինչպէս շատ մը թանկագին իրեր չնչին դնով կը ծախուէին:

«Մինչեւ օրս Ամերիկեան զօրաբանակի մէջ առանկ ստորնութիւն մը տեսնուած չէ: Դժբախտաբար այսօր ամէն վայրկեան կը տեսնենք:

Բէքինը գրաւած միջոցին տեսանք թէ ինչպէս Ամերիկացի զինուորները յափշտակեցին պալատի հանդերձանոցը որ լի էր արտակարգ թանկագին զգեստներով և զարդարանքներով: Թալանողները գլխաւորաբար զինուորներն և սպաներն էին: Երբ Ամերիկեան մէնէրալը այդ իրողութիւնը իմացաւ, ինքն ալ յափշտակեց մնացորդը և այսօր հրապարակաւ կը ծախէ:

—)(—

Ուշադիր քննութիւն մը մեզի ցոյց պիտի ապացուցի յառաջիկային սերմերը դեռ չեն մարած եւ հանճարներու խորած ծիւրերը մինչեւ հիմայ դեռ կը նշմարուին: Բայց որոնք անյարմար ու յոռի միջավայրի մը մը մէջ աւլօրէն փճանալու պատապարտուած են:

Բաճիկին ու Գամառ Քաթիպան իսկ նոյն բաղդին պիտի արժանանային, եթէ ծնած ըլլային այս աւերակներու ու ջարդերու շրջանին մէջ: Որովհետեւ, այսօր անժխտելիօրէն սպառնացուած է թէ, գրադէս մը հասարակաց գործիչ մը իր շըրջանին մէջ կը զգոյցած բացառութիւն մը չէ, այլ իր միջավայրին հարազատ ծնունդը: Միջավայրն է որ հանճարները կը ծնի կամ զանոնք արդիւնաւոր կը դարձնէ:

Չափազանց պիտի երկարէր ներկայ յօդուածս, եթէ հարկ ըլլար նոյնիսկ մեր կեանքէն առնուած օրինակներով եւ փաստերով ապացուցանել այս ճշմարտութիւնը:

Սակայն, եթէ Մայր Հայրենիքի վիճակը անկարելի կը դարձնէր հոն ապրող հայութեան իր մտաւոր ու բարոյական յառաջիկային առանձնապէս հետեւիլ եւ հանճարներ

արտադրել: նոյն արգելքներուն ու զգոյցներով թեմանց ենթակուած չէին վեհեմիկի կամ վիշնայի Միթիթարեան միաբանութիւնները: Հետո Մայր Հայրենիքէն՝ այդ երկու քոյր հաստատութիւնները, միշտ ապրած են եւրոպական ազատ ու խաղաղ մթնոլորտի մէջ: Բուռն ու կատաղի մըրիկները որոնք Թուրքիոյ հայութիւնը վայրագորէն ալիկոնցին, կամ այն լախաի դանդաղ բայց անբուժելի հարուածները, որոնք անգարմանելիօրէն ջրաշախիթին Ռուսիոյ հայութիւնը, չի կրցան ու չէին կրնար ամենադոյն ազգեցութիւն մը իսկ ունենալ Միթիթարեանց վրայ: Երբ ինչո՞ւ Գաթիթարեանը, Չամչեանները, Ալիշաններն ու Բազրատեանները, Այսանեաններն ու Չարհանէլեանները իրենց յաջորդները չունեցան նոյն հաստատութեանց մէջ: Ինչո՞ւ:

Յօդուածին նպատակը այդ «ինչո՞ւ»ին պատասխանը փնտռել չէ: Միաբանութեան յարգելի հայրերուն կը թողում անոր վրայ խորհրդածել, որովհետեւ կարեւոր հարց մըն է ասիկա, զոր Բազրատեան խմբագրութիւնը ինքն իսկ հրապարակ կը նետէ եւ որուն պատճառները կարժէ ուսումնասիրել:

Իրաւ է որ, մեր ազգը փայլուն շրջանի մը մէջ չի գտնուիր հիմայ: Բայց չէր կրնար ուրիշ կերպ ըլլալ, քանի որ փոխացման շրջանի մէջ Քնք, «Երեւան եկող անկարգութեանց», զեղուամերու սոփեստութեանց, քառասյին խառնաշփոթութեանց պատասխանատուութիւնը աւ ու ան անձին, կամ ազգին վրայ չի ծանրանար, այլ բուն իսկ ներկայ շրջանին եւ յարակից պարագաներուն վրայ, որոնք այսպէս անբարձր, ինչպէս, սահմակած սերունդ մը ծնան, անորոշ էր քայլերուն մէջ, անստոյգ ապագայի մը ու ճակատագրին քմայքներուն յանձնուած:

Ու երբ այս ճգնաժամին մէջ իսկ, անիկա չի զարթիր գերմարդկային ճիգեր ու զոհողութիւններ ընելէ իր ազատութիւնը ձեռք իրերու եւ իր յառաջիկային գործը վերստին սկսելու համար, երբ վաղուան հացը մտածող յետին գիւղացին իր անձը կը նուիրէ կամ իր քսակէն բաժին մը կը հանէ իր յեղափոխութեան, իր որբերուն, իր զպրօցներուն, իր թերթերուն համար, երբէք տրտնջալու տեղի չի կայ Որովհետեւ այդ զոհողութիւնները ամուլ չեն մտար, ինչպէս սովորաբար կեն-

թաղերն զժգոհ արանջացողները: Անոնց արդիւնքովն է որ այս գծոխային կացութեան մէջ, դեռ ազգը իր բարոյական ուժը անվթար կը պահէ եւ՝ իր արգ կը տոկայ ու կապրի, այդ զոհողութեանց հետեւանքովն է որ արդէնտեղեւն բացած խոր վերքերը կը սկսին տակ ու բուժուիլ: Աչքի զարնող, բացառիկ հանճարներ ի յայտ չեն գար, բայց ատոր համար ոչ ոք պատասխանատու է, եթէ ոչ ժամանակը: Հիւանդին վրայ՝ գործածուած ամենէն ազգուղիկներն իսկ չեն կրնար մարգը ուժեղցնել կամ գիւրցնել, յայց անոնք հիւանդը մահուան գէմ կը պաշտպանեն եւ չեն թողուր որ էակը քայքայուի: Նոյն դերը կատարելու կոչուած են այսօր մեր մտաւորական մշակները եւ հասարակական գործիչները, առանց բացառիկ հանճարներ կազմելու:

ՇԱՀԱՊ

(Շարունակելի)

—)(—

ՅՈՒՆԱՍՏԱՆ ԵՒ ՊՈՒԼԿԱՐԻԱ

Մեր ընթացողներուն անշուշտ յայտնի է թէ՛ յոյները որքան գէշ աչքով կը նային պուլկարներուն, մանաւանդ մակեդոնական խնդրոյն պատճառով. որովհետեւ Մակեդոնիան Յունաստանի մէկ մասը կը համարեն և մեծ ցանկութիւն ունին անոր տիրելու:

Պուրթէշի դատով և անցեալները յոյն Տօթթէօր Սաքելարեօնի սպանման պատճառով, յոյներու ատելութիւնը դէպի պուլկարները աւելի սուր կերպով կարտայայտուի իրենց մամուլին միջոցաւ:

Յոյն մամուլը միջոցներ կուտար կէտէ ծրագրեր կը թելագրէ Պուլկարիան սանձահարելու համար (*):

Աթէնքի «նէօլոյօս» թերթը շարք մը առաջնորդող յօդուածներով խորհուրդ կուտայ թուրք կառավարութեան խիստ միջոցներ ձեռք առնել Մակեդոնիոյ պուլկարներուն դէմ, պուլկար կառավարութիւնը ստիպել Սօֆիայի Մակեդոնական Բ. կոմիթէն տապալելու: Կառավարիչ որ թուրքերը, Ռումէնները, Ալպանացիները և Յոյները միանան և Պուլկարները ջախջախեն: Թուրքին կը թելագրէ Ալպանացիները գաղթեցնել Մակեդոնիա, հոն տեղի պուլկար տարրը ջնջելու համար և մեծ պետութիւններուն բողոքել պուլկար կառավարութեան և քարոզչութեան դէմ Մակեդոնիոյ մէջ:

Թելագրութիւնները կը վերջացնէ յոյներուն առաջարկելով նայնպէս գաղտնի կոմիթէններ հիմնել և ամէն մէկ սպաննուած յոյնի փոխարէն 10ը պուլկար սպաննել:

Նոյն լեզուն կը գործածեն «Աղբոսալիս» և «Էփէմէրիս» թերթերը:

Այսպէսով Սուլթանը իր նպատակին կը հասնի. ճշմարիտ շատ բարտաւոր է Սուլթան Համիտ, Հայկական խնդրոյն մէջ եւրոպական տէրութիւններու անհամաձայնութենէն կօգտուի. իսկ պալքանեան թերակղզիին մէջ՝ տանջուող զանազան տարրի բոլոր ունեցած ատելութենէն, եւ նոյնպէս եւրոպիոյ շահասիրութենէն բխող անտարբերութենէն:

Յոյներ և Ռումէններ այսօր Պուլկարիոյ և Մակեդոնիոյ ամենամեծ թշնամիներն են, թուրքէն աւելի թշնամի: Եւ այդ թշնամութիւնով Համիտի հացին իւր կը քսեն. իսկ Սուլթանը դիւային ժպիտով մը հրճուանքէն ձեռքերը կը շփէ «կեպուղներու» անմտութիւնը ծաղրելով:

—(—

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱԶԴ

Թագապետ խորհուրդս նկատելով որ կարգ մը անձինք բարեգործութիւն ընելու պատրուակաւ արգոյ հասարակութեան քսակը կը շահագործեն թատերական ներկայացումներով կամ հանգանակութեան ձեւին տակ, կը փութայ յայտարարել թէ՛ եթէ այդ կարգի անձինք ներկայացան զբաւ հաւաքելու, պէտք է ի ձեռին ունենան թաղ խորհրդոյս կողմանէ վաւարացեալ մի պաշտօնագիր. հակառակ պարագային կը յորդորեմք արգոյ ազգայինները մերժել այդ կարգի անձանց ու եւ ձեռնտուութիւն ընել:

Ի դիմաց թաղ խորհրդոյ Ատենապետ Ատենապետ Ս. Գարիբիւլան Յ. Մ. Թովմասեան Վառնա, 27 Դեկտեմբեր

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

«Բազմավէպ» կը յայտարարէ թէ «Որբունի»-ին հրատարակութեան առթիւ կարգ մը տարածայնութիւններու կասկածներ հրապարակ ելած ըլլալուն համար, հանդէսին խմբագրութիւնը որոշած է «Որբունի»-ի բոլոր հասոյթը յատկացնել միմիայն Լուսաւորչական որբերու, Օրմանեան պատրիարքին ձեռքով, որուն այդ նպատակաւ արդէն 1000 Քր. շրջկուած է: Հրատարակուած 3000 օրինակներէն գեո 1000ը կը մնան եղբր խմբագրութեան քով, թուրքիոյ մէջ մուտքը արգիլուած ըլլալուն պատճառաւ: Կը յուսանք թէ արտասահմանի ազգայիններէն անոնք որ այդ բացառիկ հանդէսը չեն առած, պիտի փութան իրենց բաժինը ունենալ որբիկները միմիայն իւր գործին մէջ:

Նոյն հանդէսէն կը տեղեկանանք թէ Վահան Գ. Զարգարեան ձեռնարկած է «Յիշատակարան 19րդ դարու» անուն հսկայ գործի մը պատրաստութեան, ուր պիտի ներկայացուին այն բոլոր թրքահայերը, որոնք քիչ շատ դիւրք մը գրաւած են իրենց ազգային, գրական, բարեգործական կամ օրինակ է հանրօգուտ գործերով: Ամբողջ հարիւրամեայ շրջան մըն է որ պիտի պատկերանայ հոն, այնքան այլազան, այնքան բեղուն մեզ համար: Ազգային գրականութիւնը, թատրոնը, տպագրութիւնը, լրագրութիւնը ու երաժշտութիւնը իրենց տեղը պիտի ունենան:

Հոն պիտի խօսուի նաեւ Միւթէվելիական շրջանին և ազգային Յասմանագրութեան վրայ: Ամէն մէկ կենսագրական պիտի ունենայ իր հետ անհատին կենսականագիրը և ձեռագիր մէկ գրութիւնը: Ասոր համար հեղինակը հրաւեր կը կարգայ հասարակութեան, որպէս զի իրեն աջակցի կարգ մը անձնաւորութեանց լուսանկարները և ձեռագրերը ճարելու համար, որոնց քիչ շատ կը խոստանայ անվճար ետ դարձնել: Հոյակապ ձեռնարկ մըն է, որուն համար ջերմ հանդէսներ կը շարժուին: Զարգարեանի խումբ մը կը պատրաստուի ստեղծելու համար Բարիկի ցուցահանդէսները, և սակայն 50 աշակերտներ խնայողութեան համար դուրս ձգուել են ճեմարանէն: *

Լազարեան ճեմարանը իր լեզուագիտական մասնաճիւղին համար Բարիկի ցուցահանդէսէն սակի միտալ սաացած է: Զանչեանցի յիշատակին Ռուսահայ գրագէտներու խումբ մը կը պատրաստուի ստուար գրական հանդէս մը հրատարակել, ուրկէ գոյացած հասոյթը հայ որբիկներուն պիտի յատկացուի: Գամառ-Քաթիպայի վրայ կանգնուելիք շիրիմին համար, ցարդ 2416 ռուպլի հանգանակուած է: Տիկին Նադիրեան 450,000 ռուպլի կտակած է զանազան հանրօգուտ հաստատութեանց, ուրկէ պարտաւ բաժին մըն ալ էջմիածնին:

«Լ'Արմէնի» ստոյգ ազգիւրներէ իմացած է որ 1897ի հայկական խումբութիւններու պատճառով ձեռքաւորուած հայերու ազատ արձակումը օրուան խնդիր է: Անդրիական զեռպանատունը զիջանելով բանտարկեալներու ծնողաց խնդրանքներուն պաշտօնպէս խոստացած է Բ. Դըռնէն պահանջել այդ տարաբաղչաներուն ազատութիւնը: Օրմանեան ալ երաշխաւոր պիտի ըլլայ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պուրթէշէն «Թան» կը հեռագրեն թէ Գերմանիոյ նախարարպետ Պիւլօֆի ջանքերով թիւրքիոյ և Ռուսիոյ միջև համաձայնութիւն գոյացած է Պալքանեան երկիրներու մէջ եղած բոլոր ապստամբական խրտումներուն միասին դիմադրելու: Բայց ասոր հակառակ համաձայնութիւն մըն ալ գոյացած է Պուլկարիոյ և Սերպիոյ միջև Ռուսիոյ շնորհիւ: Սելանիկէն հասած վերջին տեղեկութիւններու համեմատ յոյն Տօթ. Սաքելարեօնի սպաննուած ձեռքերը ձեռքաւորութեան կողմէն: Մարգասպանը Սաքելարեօնի նշանաձին նախկին փեսացուն է: Ուրեմըն սպաննութեան պատճառը լոկ անձնական խնդիրներն են: Գեղտեմբեր 18յն Բ. Գուալյունական և տաճկական հիւպատոսներու խնդրոյն առթիւ ծանուցագիր մը իր յիշատակագրով միասին զրկած է աւստրիական զեռպանին: Եւրոպական դեսպանները, որոնք իրաւարարները ներուած էին այդ խնդիրը կարգադրելու համար, թէ թուրքիոյ և թէ Ռուսաստանի այդ խնդրոյն մասին տուած յիշատակագրերը քննելէ յետոյ իրենց վճիռը պիտի արձակեն: Գոյսոյ «Իգտամ» թուրք թերթը կը հաղորդէ թէ՛ Շահը անցեալները թուրքիոյ հետ կընքած համաձայնութեան մը հիման վրայ, Ստրպուտականի նահանգապետներուն հրամայել է հայ յեղափոխականներուն արգիլել արշաւելու տաճկական հողը, իսկ Սուլթանն ալ հրամայած է խիստ միջոցներ ձեռք առնել Պարսից սահմանակից քիւրտերու արշաւանքները արգիլելու համար:

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Իէքինէն կը հաղորդեն թէ Գերմանիոյ դեսպանը սպաննողը մահուան դատապարտուել է և վճիռը գործուած տեղը:

Իշխան Չինկ և Լի-Հունկ-Չանկ Դեկտեմբեր 22ին տեսակցութիւն պիտի ունենային եւրոպական դեսպաններուն հետ:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Լօրտ Գիշներ Բրէթօրիայէն կը հեռագրէ թէ ժէնեւի Գնօքս կը շարունակէ հալածել պօէր զօրավար Տիէթը, շատ մը պաշար խիւր է անոր ձեռքէն, և 76 պօէրներ ալատել է, որոնք Տիէթի ստիպմամբ կրկին կը կըրուէին: Ժէնեւի Փրէնչ գերած է 12 պօէր ու խլած է շատ մը սայլեր և անասուններ:

Նախագահ Գրիւկէր թեթեւ պրօնչիոնէ բռնուած է և անկողնոյ կը ծառայէ:

Պօէրները Ռուսէսպուրկ հասած են. նոյնպէս և բազմաթիւ անգլիացի օգնական զօրքեր:

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Ամերիկայի և Եգիպտոսի չը վճարող բաժանորդներուն. — Կը խնդրենք շտապել բաժնեգրները մինչեւ Փետրուար մէկ անպատճառ հասցնել մեզ: Մինչեւ այդ ժամանակ չը վճարողներուն այլևս «Շարժում» չի պիտի շրջուի: Միեւնոյն ժամանակ չը վճարողներուն անունները պիտի հրատարակուի «Շարժում» մէջ: Печатница Хр. Н. Войниковъ—Варна.